«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Սովորողների մոտ արժեքային համակարգի ձևավորումը հայ գրականություն առարկայի ժամերին
ԱՌԱՐԿԱ	Մայրենի
ՀԵՂԻՆԱԿ	Լ. Թադևոսյան
ՄԱՐԶ	Արագածոտն
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Քուչակի Մ. Նալբանդյանի անվան միջն. դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ 5
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ 7
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ 10
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 17
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գրականության դասավանդման մեթոդիկան ուսուցման մեթոդների, եղանակների գիտականորեն մշակված այն համակարգն է, առանց որի հնարավոր չէ միջնակարգ դպրոցում գրականության լիարժեք և համակողմանի ուսուցումը: Գրականության դասավանդման մեթոդիկան իր բովանդակությամբ կապվում է երկու կողմերի՝ ուսուցանողի և աշակերտի հետ: Նշված երկու կողմերը հարաբերվում են գրականությունը ուսուցանելու հետ կապված տարբեր ոլորտներում՝ դպրոցական աշխատանք, տնային աշխատանք, ծրագրային հանձնարարություն, ծրագրից դուրս հանձնարարություն:

Հայ գրականության ուսուցումը դպրոցում կարևորվում է առաջին հերթին աշակերտների մեջ դրական ու համամարդկային հատկանիշներ ձևավորելու տեսանկյունից:

Հանրակրթական դպրոցում «Հայ գրականություն» առարկայի ուսուցման նպատակը գրական ստեղծագործությունների ուսումնասիրությունն է:

Ելնելով վերը նշված դրույթներից՝ հանրակրթական դպրոցում հայ գրականության ուսուցման կարևոր խնդիրները կլինեն՝ սովորողը պետք է ընդհանուր գաղափար կազմի.

- ✓ հայ գրականության զարգացման փուլերի,
- ✓ հայ գրողների կյանքի և ստեղծագործության ընդհանուր պատկերի,
- ✓ հայ գրականության համաշխարհային արժեքի, ազգային հոգեկերտվածքի ձևավորման մեջ նրա բացառիկ դերի ու նշանակության, գրողի և ժամանակաշրջանի փոխհարաբերության,
- ✓ գրական հիմնական ուղղությունների և մեթոդների մասին:

Սովորողը պետք է կարողանա՝ կարդալ, ընկալել գրական ստեղծագործությունը, ընկալել երկի կառուցվածքը, վերլուծել, մեկնաբանել ստեղծագործությունը, ներկայացնել ստեղծագործության հիմնական գաղափարը, ներկայացնել ստեղծագործության հերոսներին, վերլուծել կերպարները, տեսնել կերպարների արարքների հոգեբանական շարժառիթները, արտահայտել իր վերաբերմունքը ստեղծագործության գաղափարական ու գեղարվեստական արժանիքների վերաբերյալ, ստեղծագործության մեջ արտահայտված գաղափարների արդիական հնչեղությունը, անցյալի և ժամանակակից կյանքի ներքին կապը:

Հետազոտության նպատակը: Աշխատանքի նպատակը բացահայտել սովորողների մոտ արժեքային համակարգի ձևավորումը հայ գրականություն առարկայի

ժամերին: Այս նպատակից ելնելով աշխատանքում ուսումնասիել ենք հետևյալ խնդիրները՝

Հետազոտության խնդիրներն են՝

- Ուսումնասիրել Գեղարվեստական նյութերի առանձնահատկությունները գրականության ժամերին
- Բացահայտել Կարդալու հմտությունների կարողությունները գեղարվեստական նյութերի ուսուցման ընթացքում:
- Վերլուծել ստեղծագործության ուսուցման մեթոդները:

Հետազոտության կառուցվածքը

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, բուն նյութից, եզրակացություններից, գրականության ցանկից:

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄՈՏ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԺԱՄԵՐԻՆ

Հայ գրականության դասընթացի արդյունավետ ուսումնասիրումը պահանջում է գրական-տեսական գիտելիքների խորքային իմացում: Առանց դրա հնարավոր չէ հաստատապես ուսումնասիրել հայ գրականության պատմությունը, մանավանդ գեղարվեստական ստեղծագործությունները: Այդ գիտելիքները կարևոր են նաև աշակերտների խոսքի զարգացման և նրանց գրական մտահորիզոնի ընդլայնման համար:

Գրական երկերի դասավանդումը հայ գրականության դասագրքերում սովորաբար ուղեկցվում է երեք քայլով.

1. առանձին հատվածների ընթերցում՝ բովանդակության ամբողջական ընկալման նպատակով,
2. բարոյահոգեբանական իմաստի վերհանում,
3. լեզվի վերլուծություն:

Գրական ստեղծագործությունների ուսուցումը դպրոցում անհրաժեշտ է սկսել տեսական իմացությունների որոշակի պատրաստվածությամբ, այդ թվում՝ գրական երկերի խմբավորման և գրական առանձին տեսակների մասին աշակերտին տրվող գիտելիքներով: Ըստ այդմ՝ աշակերտը պարտավոր է իմանալ, որ գեղարվեստական գրականությունը բաժանվում է երեք մեծ սեռերի՝ ա)վիպական (էպիկական կամ էպոս), բ)քնարական(լիրիկական կամ լիրիկա), գ)թատերգական (դրամատիկական կամ դրամա): Միաժամանակ նա պիտի պատկերացում ունենա նաև առանձին սեռերին բնութագրական գրական տեսակների մասին: Վիպական սեռի տեսակներն են՝ դիցաբանական զրույց, առասպել, լեգենդ, հեքիաթ, վիպակ, վեպ և այլ: Քնարական սեռի տեսակներն են՝ հիմնը, ներբողը, թուղթը, հայրենը, խաղիկը, սոնետը, ռոնդոն և այլ: Թատերերգական սեռի տեսակներն են՝ ողբերգությունը, կատակերգությունը, դրաման, ֆարսը և այլն: Գրական այս երեք սեռերի միջև կան էական տարբերություններ. Վիպական սեռին բնորոշ է մի բանի մասին պատմելը, քնարականին՝ հույզն ու ապրումը, նաև խոհը վերարտադրելը, իսկ թատերգության նախապայմանը կատարվող գործողության ցուցադրումն է:

Գրական ստեղծագործությունների ուսումնասիրության կարևոր պահանջը բխում է դրանց ժանրային առանձնահատկություններից: Գրականությունը կյանքն արտացոլում է պատկերման տարբեր եղանակներով, տարբեր միջոցներով: Այդ տարբերությունը պայմանավորված է գրական երկերի բնույթի, սեռի և տեսակի տարբերություններով: Միջին դասարաններում աշակերտներն արդեն ծանոթանում են գրական տարբեր տեսակների

հետ: Ավագ դպրոցում այդ գիտելիքները խորացվում են կոնկրետ ստեղծագործությունների ուսուցման ընթացքում: Այս դասարաններում աշակերտներն արդեն կարդում են վեպեր, վիպակներ, պոեմներ, դրամատիկական ամբողջական երկեր և վերլուծության ընթացքում ավելի լավ են պատկերացնելու ոչ միայն նրանց միջև եղած տարբերությունները, այլև յուրաքանչյուր տեսակի ժանրային առանձնահատկություն ները, առանց որոնց իմացության գրական երկի վերլուծությունը հնարավոր չէ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Ուսումնական գործընթացը պետք է իրականացվի համակարգված և համատեղ:

Ժամանակակից մանկավարժությունը հարուստ է ինտերակտիվ միջոցներով, որոնց շարքում առանձնանում են ստեղծագործական առաջադրանքները, աշխատանքը փոքր խմբերում, ուսուցողական խաղերը՝ դերային և գործնական խաղեր, հասարակական ռեսուրսների օգտագործում, սոցիալական նախագծեր և այլ միջոցառումներ/մրցակցություն, հեռավար ուսուցում, հարցազրույց, թեստավորում, նոր նյութի ուսումնասիրություն, բարդ և բանավիճային հարցերի քննարկում, կարծիքների սանդղակ, թեստավորում:

Գիտելիքի ստացմանր հաջորդում է հմտությունների յուրացումր, որր կազմակերպված քննարկումների տեսքով տեղի է ունենում հաջորդ դասաժամին առանձին թեմատիկ հարցախմբերում ներառված աղբյուրների օգնությամբ կազմակերպած խմբային աշխատանքների ընթացքում:

Դպրոցում թատերականացված գործունեությունը լավ հնարավորություն է երեխայի ստեղծագործական ներուժի բացահայտման, անձի ստեղծագործական կողմնորոշման դաստիարակության համար: Երեխաները սովորում են շրջապատող աշխարհում նկատել հետաքրքիր գաղափարներ, իրականացնել դրանք, ստեղծել կերպարի սեփական գեղարվեստական պատկերը, նրանց մոտ զարգանում է ստեղծագործական երևակայությունը, ասոցիատիվ /կապը տարրերի, առարկաների ու երևույթների միջև/ մտածողությունը, առօրյայում տեսնել անսովոր պահերը: Բացի այդ, խմբակային թատերականացված գործունեությունն ուղղված է երեխայի անձնավորության համակողմանի ներգործությանը, նրա ազատությանը, գործողության մեջ ներգրավվելուն, դրա ընթացքում ակտիվացնելով հետևյալ հնարավորությունները՝ ինքնուրույն ստեղծագործականության, բոլոր հոգեկան գործընթացների զարգացման, նպաստում է ինքնաճանաչմանը, անձնավորության ինքնաարտահայտմանը ազատության բավականին բարձր մակարդակի դեպքում, ստեղծում է պայմաններ երեխայի սոցիալականացման համար, այդ ընթացում ուժեղացնելով երեխայի հարմարվողականության ունակությունները, շտկում է հաղորդակցման շեղումները, որ առաջանում են թաքնված տաղանդի և ներուժի բացահայտման արդյունքում:

Գեղարվեստական գրականության լավագույն տարբերակը հեքիաթն է, որի բովանդակությունը երեխաները գերագույն հաճույքով են ներկայացնում խաղ-թատերացումներում: Խաղ-թատերացումները երեխային հնարավորություն են տալիս նաև ստեղծագործելու: Հերոսի կերպարն իր բոլոր դրսևորումներով վերլուծվում է խաղի

ընթացքում և նպաստում համարժեք դիրքորոշման ձևավորմանը: Այդ իսկ պատճառով թատերականացված խաղը օգտագործվում է երեխաների խոսքի զարգացման պարապմունքներում, որ կառուցված են գեղարվեստական գրականության ստեղծագործությունների հիման, ուր գրական տեքստի ընկալման ընթացքը դիտվում է որպես առանձնահատուկ հաղորդակցում: Երեխաների զարգացման համար մեծ նշանակություն ունի «սանձնական տարածությունը», խոսքային և ոչ խոսքային բաղադրիչները միջնորդավորված հաղորդակցման ժամանակ. դիմախաղ, ժեստ, «աչքերի կոնտակտ»: Միևնույն ժամանակ ժամանակակից տեխնիկայի զարգացումը թույլ է տալիս օգտագործել ուսուցման տարատեսակ միջոցներ գեղարվեստական ստեղծագործությունների հետ ծանոթացման համար, որոնք հետո կարելի է թատերականացնել:

Երեխան խաղ-թատերացումներում կարող է հանդես գալ տարբեր այլ դերերում՝ բեմադրողի, դերասանի, երաժշտական ղեկավարի, նկարչի: Ավագ նախադպրոցական տարիքում երեխան ընկալում է նաև թատրոնի գեղագիտական և սոցիալական արժեքը, լավ պատկերացնում և հասկանում է, որ ներկայացումը կոլոկտիվ ստեղծագործական աշխատանքի արդյունք է, որն ուղղված է հանդիսատեսին: Թատերացված խաղերի միջոցով գիտակցվում է արվեստի նշանակությունը հասարակական կյանքում, ձևավորվում է սեր և նվիրվածություն արվեստի և մշակութային արժեքների հանդեպ: Մանկության տարիներին ձևավորված վերաբերմունքն արվեստի նկատմամբ պահպանվում է ողջ կյանքում:

Դերերի միջոցով երեխաները նույնացվում են իրենց սյուժեի կերպարներին և փորձում արտացոլել կերպարին բնորոշ գործառույթները և հարաբերությունները: Ցանկացած դեր պարտադրում է վարքագծի և հարաբերությունների կանոններ, որոնք ակամայից յուրացվում են և գիտակցվում խաղի ընթացքում: Դերը, փաստորեն, նախադպրոցականի համար վարքի, գործունեության և հարաբերությունների նմուշ է:

Հետաքրքիր աշխուժություն է հաղորդում խաղին <<հանդիսատես>> դերի առանձնացումը և խաղարկումը: Հանդիսատես-երեխաները մասնակցում են խաղին ակտիվ դիրքորոշմամբ, նրանք արձագանքում են խաղի ընթացքին շարժումներով, ծափահարություններով և այլ հուզական դրսևորումներով: Սակայն նրանց հիմնական գործառույթը խաղի ընթացքի և դերակատարների հաջողությունների վերջնական գնահատումն է: Այսպիսով, մանկական թատրոնում հանդիսատեսը նույնքան կարևոր անձ է, որքան դերասանը: Երեխաների մի խումբը ընկերների համար խաղում է, մյուս խումբը՝ հանդիսատես դառնում: Վերջինս աստիճանաբար, աննկատ ներգրավվում է խաղի մեջ և իր վերաբերմունքով ու միջամտություններով ազդում ընթացքի վրա: Դաստիարակվում է

կիրթ, դիտարկող, մտածող հանդիսատես, որը կարողանում է գնահատել, վերաբերմունք արտահայտել, հետևություններ անել, ներկայացման մասնակիցը դառնալ: Հետո դերերը փոխվում են:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ

Փորձենք հասկանալ թե ի՞նչպես է ձևավորվում ազգային արժեքային համակարգը Հայ գրականության դասերին: Չ՞է, որ հայոց արժեքային իմացությունն առավելագույնս հնարավորություն է տալու իրականացնելու մեր իղձերը, ձևավորելու ու պահպանելու հայի կերպարը[1]:

Հայոց պատմությունը բովանդակում է դաստիրակչական վիթխարի ներուժ, հայրենասիրություն և ազգային արժանապատիվ գոյություն: Հայոց պատմության իմացությունը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության ապագա քաղաքացուն ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու ճանաչողական հմտությունները, հայոց քաղաքակրթության դարավոր ավանդույթները, փորձը և անցյալի դասերը լավագույնս ծառայեցնել հզորացման և բարգավաճման ուղին բռնած Հայաստանի անկախ պետությանը,պատկերացում կազմել համաշխարհային պատմության մեջ Հայաստանի և հայ ժողովրդի զբաղեցրած տողի ու դերի մասին: Հենց այս պատճառով է, որ կրթության զենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը[2]:

Երկերի կերպարների ուսուցումը նպատակային է և գիտակցական, եթե ընթերցանության ժամանակ աշակերտների մեջ ծագում են տարաբնույթ վարկածներ այն մասին, թե ինչ է ինքը կարդալու, ձգտում են հասկանալ, թե ինչի մասին է խոսքը գնալու ապա դերակատարման ժամանակ ինքնե դառնում այդ հերոսը և պատրաստ է ներկայացնել իր հերոսին ինչպես իրեն: Նշված գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է ինչպես աշակերտի ունեցած գիտելիքների պաշարով, այնպես էլ ուսուցչի գործոնով, նրա օգնությամբ: Երկերի կերպարների ուսուցման արդիկանացումը կարևորվում է, քանի որ սովորողները ոչ միայն պատկերացում են կազմում մեր գրական ստեղծագործությունների մասին, այլև բացառիկ դասեր են ստանում արդիականացնում և նորովի մեթոդներով ներկայացվում, ինչը կարևոր է հատկապես նոր տեղեկատվական տեխնոլոգիաների դարաշրջանում մեծացող դպրոցականներին իրենց լեզվով դասերը ճիշտ ուսուցանելու համար:

Մուրացանի գաղափարակիրը քույր Աննան է, ու հեղինակի նախապատվությունը նրա կողմն է, բայց ժամանակի հետ երիտասարդության աշխարհընկալման ու կյանքում տեղ գտած իրական արժեքների գնահատման չափանիշները խարխլվում են. նրանք անձնական շահերը գերադասում են հասարակականից: Ուրեմն ի՞նչ անել, չէ՞ որ Սուրացանի

[1] Տես՝ Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002, էջ 65:

[2] Տես՝ Ղուկասյան Ա,Հայոց պատմությունը 8-9 րդ դասարաններում: Ուսուցչի ձեռնարկ: էջ 6

ծրագրերի իրականացումը քույրանանների նման անձնազոհ անձանց հետ է կապվում, մինչդեռ սերունդը կորցնում է բարոյականի բարձր որակները, նրանում ազգասիրությունը ու ազգի հոգսերին ծառայելու պատրաստակամությունը 60-ականներին դրսևորած եռանդը չունի:

«Առաքյալը»(1902թ.): «Խորհրդավոր միանձնուհուց» 13 տարի հետո Մուրացանը գյուղ է ուղարկում մի նոր առաքյալ: Դա Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետն ավարտած Պետրոս Կամսարյանն է, որ ուսանողների ավարտական ելույթի ժամանակ հանդիսավոր երդում է տվել՝ «վերադառնալ հայրենիք և իրեն նվիրել յուր ազգակիցների ամենից ավելի օգնության կարոտ դասակարգին, այսինքն մտնել գյուղ և այնտեղ հիմնել օգնության մեծ գործ»: Հայտնվելով հայրական տանը՝ ճոխ, բարձրակենցաղ ապրելակերպը և գեղեցկուհի Ադելինայի հմայքը նրա մոտ առաջացնում են կասկածներ, բայց Պետրոսը հաղթահարում է ներքին թուլությունը, ամրապնդում է իր կամքը գաղափարական ազդակներով (կարդում է «Վերք Հայաստանին») ու մեկնում Չիբուխլու:

Իրականությունը և անհատը, գյուղը և առաքյալը կանգնում են դեմ առ դեմ: Աստիճանաբար խզվում է միացնող կապը, և երկուստեք դառնում են հակոտնյաներ՝ միմյանց մեջ որոնելով պատճառի սկիզբը: Իր կասկածներն ստուգելու միտումով Կամսարյանը այցելում է Սևանի հոգևոր միաբանություն: Անկումը համատարած է, կա մի անհաղթահարելի բնազդ , որի արմատները պետք է որոնել բնապատմական խոր նստվածքներում: Կամսարյանի մեջ պայքարող երկու ես-ից՝ «գաղափարական ես-ից» և «անձնական ես-ից», հաղթում է «անձնական ես-ը» և նա բռնում է հետդարձի ճամփան, դեպի այնտեղ, որտեղ նրան սպասում են անձնական փառք և երջանկության վայելք: «Իսկ Չիբուխլո՞ւն, Սևա՞նը… Նրանք դարձյալ մնացին իրենց տեղն ու անշարժ, անփոփոխ, ինչպես հարազատ մասունք անփոխարինելի հավիտենականության»:

Գրողը խամրող իրականության մեջ լույսի շող է փնտրում՝ առաջադրելով առաքյալներ: Կյանքի վերակերտման ճանապարհին այդ առաքյալները հաճախ կենսունակ չեն ու իրենց գաղափարական սնանկության պատճառով երբեմն բացառում են փոփոխություն նախանշող ելքերը: Շատ դեպքերում հենց իրենք՝ առաքելություն ստանձնածները, օգնության կարիք ունեն, վախենում են ծառացած խնդիրների լուծման համար տարբերակներ առաջադրել կամ կտրուկ միջոցների դիմելով՝ լուծել դրանք: Նրանցից ամեն մեկը կործանարար է ոչ առանձին անձանց համար, կործանարար է հասարակության համար, որ վարակվում, պղծվում է նրանից:

Լինելով այդ անցանկալի իրականության վկան՝ Մուրացանը ևս տեսնում է դրա հավիտենապես անփոփոխ լինելը, հասարակական արատների կարծրանալը

գաղափարական հաշմանդամությամբ տառապող ժամանակակից սերնդի մեջ: Այդ իրականությունը ծնում է Մուրացանի անհանգստությունը, ու մինչ նա առաքյալներ է փնտրում իր ծրագրերի իրականացման համար, ու գյուղ ուղարկված առաքյալներից ամեն մեկի հետ ուզում է վերականգնել ու նորացնել ջարդուփշուր եղող իր հավատը, նրանք՝ այդ առաքյալները, ժամանակի հետ անհետանում են: Եթե քույրն Աննան իր բարոյական դաստիարակությունը ստացել է 60-ականների անձնազոհ ու կամային բարձր դրսևորում ունեցող սերնդից, ապա Կամսարյանն իր մեջ կրում է անձնասիրության ախտը, որն է իր ինքնապաշտ ժամանակի ոգուն և բարեկեցության ու շահի մոլուցքի մեջ խեղդում է բարոյականի մղումները, ու փողի մեջ միայն յուր կյանքի նպատակը որոնող դասակարգը, այլև մեր ինտելիգենցիան միանում, ընկերություններ են կազմում և մեծ եռանդով աշխատում՝ միայն փող վաստակելու համար:

Կապիտալիստական քաղաքն իր ավերիչ ազդեցությունն էր թողել մարդկանց վրա: Եթե կործանարար ուժը գալիս էր քաղաքից, ուրեմն քաղաքից եկած մարդն էլ կարող էր հանձն առնել լուսավորականություն տարածելու գործը: Անհրաժեշտ էր սկսել գյուղից, քանի որ այնտեղ էին պահպանվում ազգային արժեքները, փրկել գյուղը կնշանակեր փրկել ազգը:

Առաքյալը վեպում հիմնականում ռեալիստորեն պատկերելով իրականությունը, Մուրացանը փաստորեն հերքել է <<Խորհրդավոր միանձնուհի>> ռոմանտիկական վեպում տասներեք տարի առաջ արտահայտած իր գաղափարները: Մուրացանը գյուղում գործելու առաքելությունը դնում է նյութական կարիքից ազատ բուրժուական ինտելիգենցիայի վրա. բայց միաժաման իբրև ռեալիստ ցույց է տալիս, որ դա անհնար է, այդ ինտելիգենցիան ընդունակ չէ նման անձնազոհության: Պեդանտի անուն հանած Պետրոս Կամսարյանը, ի զարմանս բոլորի, ուսանողական հավաքույթում հայտնում է, թե ինքը ավարտական քննություններից հետո, պետք է գնա գյուղում գործելու՝ հատկացնելով այդ նպատակին նաև հարուստ ծնողներից իրեն հասանելիք ժառանգությունը: Նա Մուրացանի հետ միասին այն կարծիքին է, թե գյուղացու ծանր դրության պատճառը նրա <<տգետ և անուսում>> լինելն է: Գյուղացիները կարող են ազատվել կյանքի դառնություններից և հասնել երջանիկ դրության, եթե <<խելոք գլուխները մտածեն նրանց մասին և կարող ձեռքերն աջակցեն նրանց աշխատության>>: Ինքը ունի կարող ձեռքեր և խելոք գլուխ, ուրեմն պետք է գնա գյուղ գործելու:

Մոսկվայից հայրենիք վերադառնալու ճանապարհին Կամասարյանը կազմում է իր գործունեության ծրագիրը՝ գյուղական հասարակության իրավունքների պաշտպանություն, լուսավորության գործի հիմնադրություն և գյուղացու տնտեսական դրության բարվոքում:

Կամսարյանին այնքան է հրապուրում <<մեծ գործի>> իր ծրագիրը, որ սկսում է փայփայել առաքյալի փառք ու հռչակ ստանալու հույսը:

Առաջին փորձությունը տեղի է ունենում տանը, ծնողների մոտ: Վերջիններիս զարմացնում է, որ իրենց Պետոն փոխանակ դատարաններում <<ժամերով>> ճառեր ասելու և դրա համար հազարներ ստանալու, մտածում է <<կոռների>> ու նրանց հոտած գյուղերի մասին: Իբրև նոր գայթակղություն Պետրոսի մայրը հիշեցնում է գեղեցկուհի Ադելինայի և նրա 40.000 ռուբլի օժիտի մասին: Թուլակամ Կամսարյանը տատանվում է և միայն նոթերի տետրը ձեռքն առնելով ու իր կազմած ծրագիրը կարդալով է կարողանում դիմանալ այդ գայթակղությանը: Այնուհետև Մուրացանը երգիծանքով է նկարագրում նրա ճանապարհի պատրաստությունները: Հայ գյուղում գործելու համար նա վերցնում է որսի հրացան, հունգարական թամբ, հեռադիտակ, կողմնացույց, գյուղացիների համար որսի շների տեսակների և որսորդության ու գինեգործության մասին ռուսերեն լեզվով գրված ձեռնարկներ: Պարզ է, որ Կամսարյանը չգիտե՝ ուր է գնում և ինչու:

Նա չգիտե հայ գյուղի ու գյուղացու մասին գրեթե ոչինչ: Մուրացանն ասում է, որ նա կարդացել է <<Վերք Հայաստանի>> գիրքը, բայց այդ էլ չի երևում: Այսպես, օրինակ՝ <<Կամսարյանը>> չխոսկան կանանց տեսնելով, նրանց համրի տեղ է դնում: Գյուղում գործել ուխտած այդ երիտասարդը չի կարող տանել իր հետ միասին կառքում նստած տիրացու Մոսի քրտինքի հոտը:

<<Առաքյալ>>-ում հիմնականում հաղթանակեց Մուրացանի ռեալիզմը, Չիբուխլուի պատկերում, ինչպես արևը մի կաթիլ ջրում, արտացոլված է անսահման կարիքի ու հետամնացության մեջ գտնվող հայ գյուղի պատկերը:

Վեպում Մուրացանը կերտել է բազմաթիվ տիպեր: Պետրոս Կամսարյանը կերտել է բազմաթիվ տիպեր: Պետրոս Կամսարյանը, նրա մայրը, Մոսին, Սային, Խոջան, Պետին, տեր Վանին ունեն ռեալիստական նկարագրեր: <<Առաքյալ>>-ում և <<Նոյի ագռավ>>ում Մուրացանը հաջող կերպով է օգտագործել ժողովրդական ասացվածքները, առակներն ու բարբառները:

Նախատեսվում է ,որ դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ պետք է՝ լինի հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին, կարևորի ազգային-պետական մտածողության և գործելակերպ ունենալը և դր սևորի դրան հասնելու ձգտում ու կամք:

Ունենա ազգային ինքնագիտակցություն

1. Կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը,
2. Ունենա արդարության , լավատեսության և պատասխանատվության զգացում,

3. Գիտակցի ներկան և ապագան կերտելու խնդրում ազգային պատմության դերը,
4. Գիտակցի իր ժողովրդի նյութական և հոգևոր արժեքները պահպանելու անհրաժեշտությունը:
5. Գիտակցի, որ կյանքում իր համար կարևորագույն արժեքներից են լինելու գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը և այլն…

Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիրակչական կամ արժեաքյին և ընդհանուր զարգացման խնդիրներ: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիրակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում[3]:

Հայ գրականության առարկայի ուսուցման նպատակները բազմազան են, սակայն առանձնացնենք նրանցից մեկը՝ զինել աշակերտներին ազգային արժեքներով:

Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել կրթադաստիրակչական մի շարք կարևոր խնդիրներ[4]:

1. Սովորողներին զինել հին, միջնադարի, նոր և նորագույն ժամանակների հայոց պատմության ամբողջական գիտելիքներով,որոնց միջով կարմիր թելով պետա է անցնի ազատության, անկախության, պետականության ստեղծման և ամրապնդման համար պայքարին սեփական մասնակցությաունը բերելու գաղափարը: Այդ գիտելիքները մեծապես կօգնեն հասկանալ ու իմաստավորել հայ ժողովրդի անցյալն ու ներկան, դասեր քաղել պատմությունից:Հայոց պատմության խոր իմացությունը կօգնի մեր հանրապետության քաղաքացիներին կապվելու մայր հողին,տեր կանգնելու հայրենի տուն ու տեղին:
2. Ցույց տալ ազգային-ազատագրական պայքարի հերոսական դրվագները , հայ ժողովրդի խիզախ ու քաջարի զավակների անձնազոհ սխրանքները:
3. Գաղափար տալ հայ մշակույթի, քաղաքակրթության նրա առաջացման ու զարգացման օրինաչափությունների , առանձնահատկությունների մասին: Ծանոթացնել հայ ժողովրդի մշակույթային արժեքների և համամարդկային նվաճումների հետ: Ծանոթացումը հայրենի երկրի մշակույթին, պատմամշակույթային կոթողներին:

[3] Տես՝ Բաբանսկի Յու.-Աշակերտների դաստիրակությունը կոմպլեքսային մոտեցում: էջ 112
[4] Տես՝ Ղուկասյան Ա,Հայոց պատմությունը 8-9 րդ դասարաններում: Ուսուցչի ձեռնարկ: էջ 12

4. Ցույց տալ ժողովրդի աշխատասիրությունը, ազատ, խաղաղ և ստեղծագործ աշխատանքի նրա բնածին ձգտումը: Ներարկել սեր և հարգանք աշխատանքի, աշխատավոր և բարիքներ ստեղծող մարդկանց նկատմամբ:
5. Պատկերացում տալ մեր ժողովրդի կյանքի ու կենցաղի, ապրելակերպի ու ավանդույթների, վարքի ու բարքի մասին, հասկանալի դարձնել, թե ինչպես են ապրել ու աշխատել մեր նախնիները , ինչպես են ընտանիք կազմել,սնվել ու հագնվել: Այս գիտելիքները սովորողներին կմոտեցնեն մեր ազգային արմատներին ու ակունքներին:
6. Բացահայտել պատմամշակույթային գործիչների՝ պատմություն կերտողների կյանքն ու գործը: Հասկանալի դարձնել, որ պատմական այդ գործիչների միջոցով են իրականացվում ազգային-հասարակական ձգտումներն ու իդեալները:
7. Բացահայտել պատմական ճշմարտությունը, նշել, որ այն ծնվում է տարբեր սկզբնաղբյուրների համադրումից:
8. Դաստիրակել խորը հայրենասիրություն, ձևավորել հայրենիքի, ազգային պետության ու ժողովրդի նկատմամբ ազգային արժանապատվություն ու հպարտություն, անմնացորդ սիրո ու հարգանքի խոր զգացում: Ներարկել այն գաղափարը, որ հայրենիքին ու հայոց բանակին ծառայելը պատվի գործ է:

9.Ճանաչելի դարձնել Հայաստան աշխարհն ու հայրենի բնօրրանը, բնապատմական և պատմամշակույթային այն միջավայրը,որտեղ ապրել ու իր պատմական ուղին է անցել հայ ժողովուրդը:

10. Հասնել այն բանին,որ իր ժողովրդի հարուստ պատմական փորձով զինված Հայաստանի վաղվա քաղաքացին գիտակցի իր անմիջական մասնակցության անհրաժեշտությունը ազգային հիմնախնդիրների լուծման, անկախ պետականության կերտման , հայրենիքի բարգավաճման և վերածնության գործին:

11. Նպաստել մարդասիրություն և սոցիալական արդարության ոգով տոգորված ժամանակակից ազատ ու գիտակից անհատի և քաղաքացու ձևավորմանը:

12. Ձևավորել սեփական գործունեությունը հանդուրժողականության և մարդու իրավունքների ինչպես նաև համամարդկային բարոյական սկզբունքներին համապատասխան կառուցելու պահանջմունք ու կարողություն:

13. Ձևավորել գիտակից վերաբերմունք համամարդկային գլոբալ հիմնախնդիրների, բնական աղետների, մարդկության ճակատագրի և ապագայի նկատմամբ:

14.Զարգացնել սովորողների ճանաչողական, տրամաբանական, ստողծագործական մտածողությունը հաղորդակցական, համագործակցային և ինքնուրույն գործունեության կարողություններն ու հմտությունները. խթանել սովորողների ճանաչողական

ակտիվությունը,մտածողության ինքնուրույնությունը, սեփական գիտելիքներն ինքնուրույն լրացնելու և հարստացնելու կարողությունները:

Սովորեցնել տեղեկատվության աղբյուրներից օգտվելու, ժամանակակից տեղեկատվական հեղեղի մեջ կողմնորոշվելու,անհրաժեշտ տեղեկությունը ճիշտ ընտրելու, մշակելու, վերաձևակերպելու, այսինքն՝ գիտելիք կառուցելու կարողություններ:

Ձևավորել պատմական դեպքերը,երևույթները համեմատելու, վերլուծելու, գնահատելու, վերացարկելու, ընդհանրացնելու և կանխատեսումներ կատարելու կարողություններ.

Զարգացնել ուսումնառության արդյունքում սովորողների ստացած գիտելիքները և տեսական դրույթները պատմական կենդանի նյութի վրա կոնկրետացնելու անցյալի, ներկայի հասարակական-քաղաքական երևույթների վերլուծության ժամանակ կիրառելու կարողություններ ու հմտություններ:

Զարգացնել սովորողների զգայական ընկալման, մտավոր և հուզական ճանաչողության բոլոր տեսակներն ու կամային որակները (լսողություն, տեսողություն, կամք, համառություն) և մտավոր գործողությունները (համեմատում, համադրում և այլն):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայ գրականության դասերի պարբերաբար լսումներն ու քննարկումները ցույց են տալիս, որ գեղարվեստական բնագրի, այդ թվում՝ երկերի ուսուցումը, պետք է կազմակերպվի որոշակի մեթոդներով, որպեսզի ստեղծագործությունը ունենա արդիակիան բնույթ, ձևավորի սովորողների արժեքային համակարգը, անարդյունավետ ու ձանձրալի չլինի:

Հայ գրականության դասերի պարբերաբար լսումներն ու քննարկումները ցույց են տալիս, որ գեղարվեստական բնագրի, այդ թվում՝ երկերի ուսուցումը, պետք է կազմակերպվի որոշակի մեթոդներով, որպեսզի ստեղծագործությունը ունենա արդիակիան բնույթ, ձևավորի սովորողների արժեքային համակարգը, անարդյունավետ ու ձանձրալի չլինի: Երկերում հերոսների ուսումնասիրման դասի մեթոդական շղթան ընդգրկում է հետևյալ քայլերը.

- ✓ նախապատրաստական զրույց վեպի թեմայի շուրջ,
- ✓ վեպի առանձին հատվածների ամբողջական ընթերցում (կարդում են աշակերտները համապատասխան մեկնաբանություններով),
- ✓ աշխատանք պատմվածքի բովանդակության,, լեզվի և ոճի առանձնահատկությունների, հիմնական մտքի, դաստիարակչական գաղափարի բացահայտման, ենթատեքստի կռահման ուղղությամբ,
- ✓ պատմելու նախապատրաստում,պատմում,

Իր աշխարհայացքով Մուրացանը հարում էր ազգային պահպանողականությանը և ազգի գոյության հիմքը համարում էր «բարոյական հարստությունը», որի արժեքներն են՝ եկեղեցին, ընտանիքը, պատմությունը, մշակույթը: Իր դավանաբանական վեպերում՝ «Հայ բողոքականի ընտանիքը» (1882), «Իմ կաթոլիկ հարսնացուն» (1885), «Չհաս է» (1886), Մուրացանը ցույց է տալիս հայադավան եկեղեցու կարևորությունը ազգային միասնության պահպանության տեսանկյունից՝ ի հակադրություն ազգի միասնությունը տրոհող այլադավանության: Նույն այդ ազգային բարոյականության տեսանկյունից Մուրացանը «Հասարակաց որդեգիրը», «Հարուստները զվարճանում են», «Անպատճառ իշխանուհին», «Ինչ լայեղ է» պատմվածքներում սուր քննադատության է ենթարկում հայ բուրժուազիային և ազնվականության վերջին մոհիկաններին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գյուլամիրյան Ջ,, Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2006:
2. Ջրբաշյան Էդ., Գրականության տեսություն, Երևան, 1980:
3. Краткая литературная энциклопедия, т. 6, М. 1971.
4. Кулагина И.Ю., Колюцкий В.Н.Возрастная психология: Полный жизненный цикл развития человека. Учебное пособие для студентов высших учебных заведений. — М.: ТЦ «Сфера», 2001.-464с.
5. . Валлон А. Психическое развитие ребенка. М., 1967.
6. . Эльконин Д.Б. Психология игры. М., 1978.